



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2023 թվականի N 786-Ա

**ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25/2, ԹԻՎ 4, 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25/8, ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 1
ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԵՎՈՐԳ ՎԱԶԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Գևորգ Վաչիկի Թովմասյանի դիմումը (մուտք՝ 07/06/2023-ի ՔԴ-598-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22032022-06-0039, թիվ 19082022-06-0042, թիվ 04022020-06-0040 և թիվ 1532300 վկայականները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի (քնակավայրի) գլխավոր հանրակազմիչը հաստատելու մասին» թիվ 1034-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության, 2011 թվականի դեկտեմբերի 29 -ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Փոխել ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 25/2 հասցեում գտնվող 0.01425հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ քնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Փոխել ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 0.12128հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

3. Միավորել ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 4, Երևանյան փողոցի թիվ 25/2, Երևանյան փողոց 1-ին թաղամաս 25/8 և Կիրովի փողոց 1-ին թաղամաս հասցեներում գտնվող Գևորգ Վաչիկի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող, ընդհանուր 0,20035հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող շինությունները՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների:

4. Միավորված անշարժ գույքերին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք քաղաք Տաշիր Երևանյան փողոց թիվ 25/2 լցակայան (փոստային դասիչ՝ 2102) հասցե:

5. Առանց ճարտարապետահակագծային առաջադրանքի տրամադրման փոխել ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող՝ 1) 120.6քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը՝ որպես գրասենյակ,

2) 18.0քմ անասնաշենքի գործառնական նշանակությունը՝ որպես տնտեսական սենյակ,

3) 22.5քմ մառանի գործառնական նշանակությունը՝ որպես պահեստային մաս,

4) 17.5քմ ամառային խոհանոցի գործառնական նշանակությունը՝ որպես տնտեսական սենյակ:

5. Հանձնարարել ճարտարապետության, քաղաքաշինության բաժնին ներկայացված փաստաթղթերի հիման վրա նշված անշարժ գույքերը հանել համայնքի բնակելի ֆոնդից և կատարել փոփոխություն հողային հաշվեկշռում:

6. Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են գրանցմանը ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հուլիսի 27

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2023 թվականի N 787-Ա

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 50-րդ, 51-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող «ՋԵՆԵՐԱԼ ՔԵՅՔԼ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գ. Զահուկյան փողոց, թիվ 3/2 պարիսպ (անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 29032023-06-0003), ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Զահուկյան փողոց 5-րդ թաղամաս, թիվ 3 գործարան (անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 20102016-06-0043), ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գ. Զահուկյան փողոց, թիվ 3/1 արտադրամաս (անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 29032023-06-0074) հասցեներում գտնվող միավորված անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գ. Զահուկյան փողոց, թիվ 3 արտադրամաս (փոստային դասիչ՝ 2101) հասցե:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հուլիսի 27
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2023 թվականի N 788-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-074-0097-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 193-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Արտավազի Վարդանյանի (անձնագիր՝ AP0457212, տրված 07.06.2016թ.) դիմումը (մուտք՝ 03.02.2023-ին, ՄԴ-122-23) հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գյուղական հանձնաժողովի 01/04/1991 թվականի N 2 որոշումից տրված քաղվածքը, «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ժառանգության իրավունքի վկայագրերը (նոտարական ակտի կողեր՝ (864-20230201-84-6642215, 864-20230201-84-6642209), ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետը, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0.089787 հա բնակելի կառուցապատման հողամասը և բնակելի նշանակության շինությունները, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Գևորգ Արտավազդի և Վիկտորյա Արտավազդի Վարդանյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, յուրաքանչյուրին անշարժ գույքի 1/2(մեկ երկրորդ) բաժինը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0097-0011 կադաստրային ծածկագրում գտնվող 0,089787 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Գևորգ Արտավազդի և Վիկտորյա Արտավազդի Վարդանյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, յուրաքանչյուրին անշարժ գույքի 1/2(մեկ երկրորդ) բաժինը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0097-0011 կադաստրային ծածկագրով 0,089787 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Տնատիրության տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Ա.Խաչատրյան փողոց թիվ 45 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 21-12)

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ բնակելի տան հասցեավորման համար:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 02 մարտի 2023 թվականի՝ «Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-074-0097-0011 կադաստրային ծածկագրով հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հողօգտագործման իրավունքը ճանաչելու մասին» N 193-Ա որոշումը:

7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հուլիսի 28

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2023 թվականի N 789-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N13-Ն հրամանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի օգոստոսի 29-ին անցկացնել մրցույթ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

- 1) Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1), ժամը՝ 11:30
- 2) Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2), ժամը՝ 11:30
- 3) Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-11), ժամը՝ 14:30:
- 4) Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-12), ժամը՝ 14:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հուլիսի 28
ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2023 թվականի N 790-Ա

**ՍԱՆԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, ԲԵԳՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԼԵՏ ՏՈՆՈՅԱՆԻՆ
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան .

Քաղաքացիներ Սանամ Սուքիասյանը, Բեգո Սուքիասյանը և Համլետ Տոնոյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 28-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 'բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-039-0126-0022, 06-039-0163-0066, 06-039-0064-0003, 06-039-0140-0019, 06-039-0151-0090, 06-039-0169-0107 և 06-039-0101-0011 կադաստրային ծածկագրերով, 2.047 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Սանամ Սուքիասյանի, Բեգո Սուքիասյանի և Համլետ Տոնոյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 266.153 (երկու հարյուր վաթսուվեց հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ, որից 161.073 (հարյուր վաթսունմեկ հազար յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 105.080 (հարյուր հինգ հազար ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 40.394 (քառասուն հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, որից 34.990 (երեսունչորս հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.404 (հինգ հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2023 թվականի հունիսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Սանամ Սուքիասյանը, Բեգո Սուքիասյանը և Համլետ Տոնոյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 20.07.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Սանամ Սուքիասյանի, Բեգո Սուքիասյանի և Համլետ Տոնոյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.Քաղաքացի Սանամ Սուքիասյանից, Բեգո Սուքիասյանից և Համլետ Տոնոյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 306.547 (երեք հարյուր վեց հազար հինգ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ.

266.153 (երկու հարյուր վաթսունվեց հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես 06-039-0126-0022, 06-039-0163-0066, 06-039-0064-0003, 06-039-0140-0019, 06-039-0151-0090, 06-039-0169-0107 և 06-039-0101-0011 կադասրային ծածկագրերով, 2.047 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ,որից 161.073(հարյուր վաթսունմեկ հազար յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք,105.080 (հարյուր հինգ հազար ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

40.394 (քառասուն հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ՝ որ պես անշարժ գույքի հարկ,որից 34.990 (երեսունչորս հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.404 (հինգ հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275085034 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002039 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է.ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հուլիսի 28

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2023 թվականի N 791-Ա

**ԱՄԱԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ամալյա Ավետիսյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-099-0229-0034, 06-099-0229-0032, 06-099-0010-0016 և 06-099-0213-0024 կադաստրային ծածկագրերով, 4.343 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Ամալյա Ավետիսյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ:

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 85.394 (ութ սունհինգ հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, որից 56.608

(հիսունվեց հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 26.789 (քսանվեց հազար յոթ հարյուր ութսունինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 62.753 (վաթսուներկու հազար յոթ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ, որից 55.079 (հիսունհինգ հազար յոթանասունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.674 (յոթ հազար վեց հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2023 թվականի հունիսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Ամալյա Ավետիսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 20.07.2023) :

(Վարչական վարույթի լուծման իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Ամալյա Ավետիսյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մոծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Քաղաքացի Ամալյա Ավետիսյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 148.147 (հարյուր քառասունութ հազար հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ.

85.394 (ութ սունիինգ հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ՝ որպես 06-099-0229-0034, 06-099-0229-0032, 06-099-0010-0016 և 06-099-0213-0024 կադասրային ծածկագրերով, 4.343 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 56.608 (հիսունվեց հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 26.789 (քսանվեց հազար յոթ հարյուր ութսունինը),

62.753 (վաթսուներկու հազար յոթ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որ պես անշարժ գույքի հարկ, որից 55.079 (հիսունհինգ հազար յոթանասունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.674 (յոթ հազար վեց հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության՝ Տաշիրի համայնքապետարանի 900275099027 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275001973 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հուլիսի 28

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2023 թվականի N 792-Ա

**ԱՐԵՎԻԿ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արևիկ Ավետյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 28-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-039-0153-0025, 06-039-0147-0067, 06-039-0169-0605, 06-039-0169-0271, 06-039-0166-0069, 06-039-0143-0006, 06-039-0142-0080 և 06-039-0114-0123 կադաստրային ծածկագրերով, 1.487 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Արևիկ Ավետյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 138.862 (հարյուր երեսունութ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ,որից 93.158 (իննսուներեք հազար հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 45.704 (քառասունհինգ հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 17.548 (տասնյոթ հազար հինգ հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, որից 15.198 (տասնհինգ հազար հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 2.350 (երկու հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2023 թվականի հունիսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Արևիկ Ավետյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 20.07.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Արևիկ Ավետյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Քաղաքացի Արևիկ Ավետյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 156.410 (հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ.

138.862 (հարյուր երեսունութ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ՝ որպես 06-039-0153-0025, 06-039-0147-0067, 06-039-0169-0605, 06-039-0169-0271, 06-039-0166-0069, 06-039-0143-0006, 06-039-0142-0080 և 06-039-0114-0123 կադասրային ծածկագրերով, 1.487 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 93.158 (իննսուներեք հազար հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 45.704 (քառասունհինգ հազար յոթ հարյուր չորս),

17.548 (տասնյոթ հազար հինգ հարյուր քառասունութ) ՀՀ դրամ՝ որ պես անշարժ գույքի հարկ, որից 15.198 (տասնհինգ հազար հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 2.350 (երկու հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275085034 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002039 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հուլիսի 28

ք.Տաշիր

